

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով համակարգող խորհրդին անդամագրվելու համար տարածաշրջանի սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք մինչև ս/թ մարտի 15-ը Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժին (ք. Գյումրի, Շահինյան 8ա) ներկայացնեն մեկական ներկայացուցչի թեկնածություն:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են՝

- սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ.
- սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՌԱՆՁՆԱՅՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ-2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ